Կարծիք

Արման Գևորգի Անդրիկյանի՝ «Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերը» (պատմություն և արդիականություն) Թ.00.05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայ Առաքելական եկեղեցու, նրա նվիրապետական աթոռների և հոգևոր թեմերի ցանկացած ժամանակահատվածի պատմության գիտատեսական և գիտագործնական ուսումնասիրումը կարևորվում է ինչպես ազգային եկեղեցական բազում փոխհարաբերությունների ճիշտ բացահայտմամբ և ընկալմամբ, այնպես էլ հայ եկեղեցու ազգապահպան գործառույթների խորազնին դիտարկմամբ:

Մեծ և անգնահատելի է եղել հատկապես հայոց հնամենի և ամենաերկարակյաց գաղթօջախների մեկի՝ պարսկահայ հոգևոր թեմերի դերն ու նշանակությունը հայ համայնքի ազգային և կրոնական նկարագրի պահպանման գործում, որի գիտական ուսումնասիրումն ունի կարևոր առաջնահերթություն:

Արման Անդրիկյանի կրոնա-եկեղեցագիտական վերլուծությամբ պայմանավորված սույն ատենախոսությունը նվիրված է Հայ Առաքելական եկեղեցու հենց Իրանի հոգևոր թեմերի պատմության ուսումնասիրմանը և գալիս է լրացնելու այդ բացը:

Հեղինակն իր առջև խնդիր է դրել պատմա-եկեղեցագիտական մի շարք մոտեցումներով, դեպքերի պատմականության և ժամանակագրական հաջորդականության սկզբունքներով վեր հանել և տեսական ու համակողմանի քննական ամբողջական վերլուծության ենթարկել Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերի գործունեության դրսևորման հոգևոր-կրոնական հիմքերը, դրանց վրա ազդեցության միտումները, գործոնները և դրսևորումները:

Ատենախոսությունն ունի ընդունելի կառուցվածք, որը ծառայում է թեմայի ճիշտ և անբողջական լուսաբանմանը: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից (121 համակարգչային էջ):

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է ուսումնասիրվող հիմնահարցի արդիականությունը, հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, ներկայացրել է կատարված աշխատանքի կիրառական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության վերլուծությունը, ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսության **առաջին գլուխը,** որը խորագրված է՝ «**Հայ Առաքելական եկեղեցու իրանահայ թեմերը միջնադարում և նոր ժամանակներում (պատմական ակնարկ)**» բաղկացած է **հինգ ենթագլուխներից**:

Ա. Անդրիկյանն անդրադարձ կատարելով Իրանի տարածքում V-XVIII դդ. հայկական գաղթօջախների ձևավորման նախապատմությանը, ներկայացրել է Հայ Առաքելական եկեղեցու Իրանի թեմերի կազմավորման աստիճանականությունը՝ ուսումնասիրման նյութ դարձնելով ս.Թադեի, Նոր Ջուղայի վանական թեմերի, Զարեհավան-Սալմաստի, Հերի, Զարեվանդի, Առնայի եպիսկոպոսությունների գործունեությունը:

Նույն գլխում ատենախոսը պահպանելով դեպքերի շարադրման ներքին տրամաբանությունը, թեմայի շարադրման ընդհանուր համատեքստում վեր է հանել իրանահայ հոգևոր թեմերի սրբերի, այդ թվում՝ Ավագ Սամլաստեցու, Իսահակ և Միրաք Թավրիզեցիների, Գրիգոր Արփայեցու մասին պատմող տեղեկությունները:

Ի գլխի ամենաստվար ենթագլուխը՝ 1.4.-ն է, որտեղ Ա. Անդրիկյանը ներկայացրել է XVIII դ. Նոր Ջուղայի և Ատրպատականի հոգևոր թեմերի գործունեությունը և դրանց փոխհարաբերությունները ս.Էջմիածնի հետ: Մասնավորապես, հեղինակի կողմից վեր են հանվել հայոց հայրապետներ՝ Ղազար Ա Ջահկեցու, Հակոբ Ե Շամախեցու, Սիմեոն Երևանցու և Ղուկաս Կարնեցու ջանքերը պարսկահայության կրոնա-իրավական կարգավիճակի բարելավման գործում: Ատենախոսը կարողացել է զատորոշել հատկապես Սիմեոն Երևանցու դերակատարումը իրանահայ երկու թեմերի՝ Ատրպատականի և Նոր Ջուղայի (իրանահնդկական) Էջմիածնի նվիրակների նշանակման և իրավական կարգավորման հարցերում:

Ի գլուխը եզրափակվում է 1606-1800 թթ. ընկած ժամանակահատվածում Նոր

Ջուղայի թեմն առաջնորդած արժանապատիվ հոգևորականների համառոտ բնութագրմամբ, որոնք մեծ ներդրում են ունեցել թեմի և գաղութի կյանքում: Ա. Անդրիկյանը մասնավորապես անդրադարձ է կատարել Մեսրոպ եպ. Ջուղայեցու, Խաչատուր Կեսարացու, Դավիթ Ա, Ստեփանոս, Աղեքսանդր, Մովսես Ա, Դավիթ Բ, Պողոս Ջուղայեցիների, Գևորգ, Մկրտիչ, Հակոբ եպիսկոպոսների գործունեությանը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը վերնագրված է՝ «Իրանահայ հոգևոր թեմերը XIX-XX դարերում»** և բաղկացած է **յոթ ենթագլուխներից**: Գլխի սկզբնամասում հեղինակը փորձել է բացահայտել Ֆաթհ Ալի Շահ Ղաջարի, Նասրեդդին և Մոզաֆֆարեդդին շահերի օրոք իրանահայ երկու՝ Ատրպատականի (Թավրիզ) և Նոր Ջուղայի (իրանահնդկական) թեմերի գործունեության խնդիրները և շրջանակները՝ թեմեր, որոնք իրավամբ հանդիսանում էին պարսկահայ համայնքի իրավական դրության երաշխավորները և պետության հետ հայ համայնքի իրավա-քաղաքական հարաբերությունների կարգավորողները: Այս առումով նա հանգամանորեն վեր է հանել Ատրպատականի թեմակալ առաջնորդ Գևորգ եպս. Վեհապետյանի, Նոր Ջուղայի թեմակալ առաջնորդ՝ Թադեոս եպս. Բեկնազարյանի պայքարը պարսկահայության իրավաքաղաքական և կրոնական ազատությունների ձեռք բերման ուղղությամբ: Ա. Անդրիկյանը քննարկման նյութ է դարձրել նաև Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես եպս. Մելիք-Թանգյանի հայրենանվեր գործունեության վաստակը և ներկայացրել XIX-XX դդ. իրանահայ թեմերի առաջնորդների ցանկը՝ տալով նրանցից ամենաաչքի ընկածների համառոտ բնութագրերը:

Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել նաև Ատրպատականի, Իրանահնդկական, Թեհրանի հոգևոր թեմերի կառավարման կանոնադրական համակարգը և նրանց փոխհարաբերությունները իրանական պետության հետ XX դ. և իրանահայ թեմերի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հեռանալու հանգամանքները:

Ատենախոսության **երրորդ՝ «Իրանահայ հոգևոր թեմերի գիտակրթական և մշակութային գործունեությունը»** գլուխը բաղկացած է **չորս ենթագլուխներից**: Այստեղ ատենախոսը հաջողությամբ ներկայացրել է XIV-XV դդ. թվագրվող շուրջ 120 հայերեն ձեռագիր հիշատակարաններում պահպանված տեղեկությունները իրանահայ թեմերի կամ եպիսկոպոսական վիճակների գրչության կենտրոնների

մասին, որոնց թեմատիկան բազմազան է և ընդգրկում է Աստվածաշունչ մատյանը, Ավետարանը, Առաքյալների և Դավանաբանական թղթերը, Ճառընտիրը, մեկնությունները, ժողովածուները, Հայսմավուրքներ և գրական ստեղծագործությունները:

Ա. Անդրիկյանը փորձել է արժևորել և վերաիմաստավորել իրանահայ թեմերի ենթակայության տակ գտնվող մի շարք հայկական բնակավայրերի՝ Սուլթանիեի, ս.Թադեի վանքի, Թավրիզի, Նոր Ջուղայի գրչության կենտրոնների և այնտեղ գործունեություն ծավալած բազում գրիչների (Մխիթար Անեցի գրիչի, Գրիգորի՝ Սարգիս քորեպիսկոպոս), Բարսեղ երեցի, Ավագի, Կարապետի, Թումայի, Աբրահամ եպ.-ի, Մըսրի, Ստեփանոս եպ. Առնջեցու, Տիրավագի և այլոց ծավալած կրթա-մշակութային գործունեությունը:

Հեղինակի ուշադրությունից չի վրիպել նաև գրչության կենտրոնների և մատյանների ընդօրինակման հովանավորների խաղացած դերը և իրանահայ գրչության կենտրոնների կապը մայր հայրենիքի ու Կիլիկիայի հայկական թագավորության նշանավոր գիտակրթական օջախների (Գլաձոր, Մեծոփավանք) և դրանց ռաբունապետերի (Եսայի Նչեցի, Ներսես Մշեցի, Գրիգոր Տաթևացի) հետ:

Գլխի երկրորդ ենթագլխում Ա. Անդրիկյանը փորձել է կարևորել Պարսկաստանի 497 հայաբնակ բնակավայրերից 312-ում կառուցված 385 եկեղեցիներից ամենանշանավոր 6 վանքերի, վանական համալիրների և եկեղեցիների, մասնավորապես՝ Ատրպատականի Դերիկի ս.Աստվածածին, ս.Ստեփանոս Նախավկա, ս.Թադե, Նոր Ջուղայի՝ ս.Ամենափրկիչ, ս.Կատարինե և Փերիա գավառի Հազարջրիբ գյուղի ս.Աստվածածին եկեղեցիների դերն ու նշանակությունն ինչպես իրանահայ թեմերի հոգևոր իշխանության սահմաններում, այնպես էլ Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեջ մասնավորապես:

Գլխի անբաժան և արժեքավոր մաս է կազմել նաև իրանահայ հոգևոր դասը ներկայացնող եկեղեցական և մշակությանին քիչ հայտնի ականավոր գործիչներից մի քանիսի՝ Խաչատուր վրդ. Կեսարացու, Հովհաննես վրդ. Մրքուզ-Ջուղայեցու, Խաչատուր աբեղա Իսահակյան-Ջուղայեցու, Ստեփանոս երեց Տերտերյան-Հազարջրիբեցու գործունեության լուսաբանումը:

Եվ վերջապես III գլխի մեջ է ընդգրկվել նաև Իրանի հայ

հարանվանությունների՝ հայ կաթողիկե 2200 հոգանոց համայնքի պատմության դրվագները, որի առաջնորդանիստը գտնվում էր Սպահանում և որի հոգևոր հովվության սահմաններում էին գտնվում Թեհրան, Սպահան, Թավրիզ, Շիրազ քաղաքները, ինչպես նաև հայ ավետարանական 1900 հոգանոց համայնքի և հայ ուղղափառների, ունիթորների, հոգելստականների գործունեության ակնարկային լուսաբանումը:

Եզրակացություններում հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական դրույթները, հետազոտության արդյունքներն ու ձևակերպված եզրակացությունները:

Նշենք, որ հեղինակը ատենախոսությունը գրելիս ուսումնասիրել, ընդհանրացրել և գիտական շրջանառության մեջ է դրել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով լույս տեսած և ատենախոսության կայացումն ապահոված շուրջ 105 անուն գրականություն, այդ թվում՝ Աստվածաշունչ մատյան, մատենագիրների ստեղծագործություններ, ձեռագիր հիշատակարաններ, կաթողիկոսական դիվանի փաստաթղթեր, ուղեգրություններ, մենագրություններ, գիտական հոդվածներ, բառարաններ:

Ա. Անդրիկյանը բարեխղճորեն հաշվի առնելով հայ եկեղեցաբանության նախորդ ժամանակաշրջանի արդյունքները և ըստ արժանվույն գնահատելով հետազոտողների վաստակը, կարողացել է ընդլայնել ու խորացրել հարցի ուսումնասիրումը, նոր ժամանակաշրջանի խնդիրների հաշվառմամբ և համեմատական մեթոդաբանությամբ ստեղծել մի աշխատանք, որը համակողմանի և ամբողջական է ներկայացնում իրանահայ հոգևոր թեմերի բովանդակային ուղղվածությունը՝ գործառնական և պատմա-կիրառական առանձնահատկությունների ամբողջության մեջ:

Ավելացնենք նաև, որ ատենախոսությունը գրված է մասնագիտական պատշաճ մակարդակով, գրագետ և ընթերցվում է հետաքրքրությամբ:

Բարձր գնահատելով ատենախոսության գիտական արժանիքը, միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ կատարված աշխատանքը զերծ չէ նաև մասնակի թերացումներից, որի կապակցությամբ էլ ցանկանում ենք արտահայտել մեր որոշակի ցանկությունները:

1. Կարծում ենք, որ ատենախոսության I գլխի վերնագրի մեջ, որը ձևակերպված է «Հայ Առաքելական եկեղեցու իրանահայ թեմերը միջնադարում և նոր ժամանակներում» ավելորդ է և անտեղին է «նոր ժամանակներում» բառակապակցության օգտագործումը, քանի որ գլուխն ավարտվում է XVIII դ., որը համարվում է ուշ միջնադար և ոչ թե նոր ժամանակներ, իսկ ատենախոսության II գլուխն էլ սկսում է XIX դ., որը համարվում է հենց նոր ժամանակների սկիզբը:

2. Էջ 95-ում հեղինակը նշում է, որ ս.Ստեփանոս Նախավկայի վանքը գտնվում է «Հայաստանի պատմական Փայտակարան նահանգի և Գողթան գավառի սահմանագլխին»: Իրականում XVII դ. կառուցված վանքը գտնվում է Ջուղայից 15 կմ արևմուտք, Արաքս գետի հովտում և ոչ մի առնչություն չունի Փայտակարանի սահմանամերձ տարածքների հետ, քանի որ Փայտակարանը արևմուտքից սահմաններից է Վասպուրականի Պարսպատունիք և ոչ թե Գողթան գավառի հետ, որի հետ ընդհանրապես սահման չունի:

3. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսության գլուխներն ունենային ամփոփիչ եզրակացություններ:

4. .Աշխատանքում տեղ են գտել համակարգչային, տեխնիկական, լեզվաոճական սպրդումներ.

ա) Կարծում ենք, որ սխալ է հղումների տեխնիկական կառուցվածքը: Ընդունված կարգ է, որ մեջբերվող նյութի հղումը դրվում է ոչ թե վերջակետից հետո, այլ վերջակետին նախորդող վերջին բառի, կամ փակվող չակերտի վրա (»[1]:):

բ) օտար ծագում ունեցող բոլոր բառերը, ինչպես օրինակ՝ «ախրանկա», «վեքիլ», «պոլիցագրեր» և այլն, պետք է ներկայացվեն չակերտների մեջ:

գ) համակարգչային թերացման արդյունքում կիսատ է մնացել էջ 20-ի Մ. Չամչյանին վերաբերող N 52 հղումը,

դ) էջ 32-ում հեղինակը ներկայացնում է իրանահայ սուրբ Գրիգոր Արփայեցու վերաբերյալ Վարագ Առաքելյանի կարծիքն այն մասին, որ նա Արենի գյուղից էր, սակայն չի նշում մեջբերման հղումը:

Հիշյալ թերություններն ամենևին էլ չեն նսեմացնում գիտականության դիրքերից գրված Ա. Անդրիկյանի բավականին հետաքրքիր և արժեքավոր ատենախոսության նշանակությունը, քանի որ այն ամբողջությամբ համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ունի գիտագործնական և ճանաչողական որոշակի արժեք և հարստացնում է պատմաեկեղեցագիտական հիմնահարցի պատմագրությունը:

Ուստի հաշվի առնելով կատարված բարեխիղճ աշխատանքը միջնորդում ենք պատմական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտական խորհրդին՝ Արման Գևորգի Անդրիկյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա լիովին արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու

Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու Ա. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Գիտական քարտուղար՝

մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ Մ.Մ. ԻՍՊԻՐՅԱՆ

07. 07. 2021թ.